

- 7 Նաեւ Յակոբ պապս մայրական,  
Որ բաբունն էր ըզՏեա մահուան,  
Կրնոջ իւրոյ սակաւամեան,  
Էր առաջնորդ հօտին Ամգեան:
- 8 Սա մինչ Բաղէշ չէր յանդորրու,  
Որդւով իւրով Աբրահամու,  
Նըստէր ի վանս Սուրբ Յօհաննու,  
Վերածայնեալ Ամբրոջու:
- 9 Ուր նա օրդին ըզՏեա ուսման,  
Ըզկարգ, վեղար եւ գաւազան,  
Ի միասին արժանանան,  
Առնուլ ի տօնս հանդիսական:
- 10 Անտի ապայ սոյն երկոքին,  
Յուխտ երթային յԷջմիածին  
Ուր նըւիրակ զոյգ կարգէին,  
Մեր աղուանից մեծ աշխարհին:
- 11 Եզրեալ նոցա պաշտօնըն զայն,  
Դարձեալ ի վանս տեղւոյն իջման,  
Կաթուղիկոսն օրհնէր յատեան,  
Եպիսկոպոս կից զերկոսեան:
- 12 Որք եւ անտի յետ ինչ ամաց,  
Ըստ բաղձանաց սրբոց իրեանց,  
Յուխտ գրնային սրբոց տեղեաց .  
Յերուսաղէմ շէն սրխրայեաց:
- 13 Ուր Գրիգոր քաջ պատրիարք,  
Ճանաչելով նոցուն տոհմ, յարկ,  
Առնէր նոցա շուք, շընորհ յարգ,  
Կարգեալ յիւրոց բաբունեաց կարգ: